№ 198 ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12 — 1904 — ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12 № 198

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիտակցական վերաբերմունք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միշտ մի և նոյնն ենք. Փոքրիկ նկատողութիւններ. Մի ակնարկ. Նամակ Հաղբատից. Նամակ Արմաւիրից. Նամակ Թէօդոսիայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԳԻՏԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

—

Միշտ յոգնած զգալ իրան, միշտ ներքի և անդորրութեան հակված լինել—ահա այն բնորոշ գիծը, որ յատուկ է մեր հին կեանքին։

Մարդիկ ոչինչ չարած՝ յոգնում են, ոչինչ չարդիւնաբերած նրանք մտածում են հանգստութեան մասին։

Այդ տրամադրութեամբ համակված մարդը չէ ցանկանում լսել քննադատական խօսք, որ պէտք է ստիպէ մտածել, շրջապատող երևոյթները վերլուծել, հարկ ադրված լինել որոշ դիրք բռնելու և գուցէ ընդհարումների մէջ ընկնելու։

Սակայն առաջադիմութիւն չէ կարող լինել մի տեղ, ուր մարդիկ սովոր չեն ուսումնասիրել կեանքի երևոյթները և գիտակցօրէն վերաբերվել դէպի օրէցօր ապարէզ եկող խնդիրները։

Քանի որ չը կայ ուսումնասիրութիւն, քանի որ չէ մտցրած քննադատական ոգի, կեանքի երևոյթները ներկայանում են իբրև անկապ, պատահական բաներ։ Եւ այն ժամանակ դժուար է մշակել կեանքի բարւոքման համար ծրագիրներ։

Իսկ երբ գիտակցական վերաբերմունքը կորոշէ կեանքի երևոյթների և զանազան ազդող պայմանների ոյժը, երբ կը պարզվի, օրինակ, որ մի տեղ գործի վրա ազդում են հրամայողական կերպով տնտեսական հանգամանքները, մի ուրիշ տեղ հասարակական և քաղաքացիական պայմանները, մի երրորդ տեղ յատուկ տեղական պայմանները, այն ժամանակ կարելի կը լինի զանազանել կարևորն անանշանից, էականը ժամանաւորից և ժամանացոյց անել մարդկանց այն գործի և աշխատանքի վրա, որոնք անհրաժեշտ են կեանքի մէջ իրական բարւոքումներ մտցնելու համար։

Մեր կեանքը լիքն է հերթական հարցերով և եթէ մենք նրանց չենք տեսնում, դա այն պատճառով չէ, որ նրանք չը կան, այլ այն, որ մենք սովոր չենք նրանցով լուրջ զբաղվելու և առհասարակ գիտակցօրէն վերաբերվելու դէպի մեզ շրջապատող երևոյթները։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՇՏ ՄԻ ԵՒ ՆՈՅՆՆ ԵՆՔ

—

Մի քանի օր առաջ, խօսելով Բագուի մասին, ես ասում էի որ ժողովուրդը ունի մեծ տրամադրութիւն հաւասալու գիտութեան փրկարար միջոցներին, բայց գիտութիւնը նաւթային քաղաքում միայն պաշտօնական ձևեր է կատարում և աշխատում է ցոյցի համար։

Իմ ստացած այս տպաւորութիւնը միանգամից հաստատում է «Մշակի» երէկվայ համարում տպված թղթակցութիւնը Բագուից։ Այդ թղթակցութեան հաղորդած փաստերը մենք գտնում ենք և Բագուի լրագիրների մէջ։—Պաշտօնական նիստի նկարագրութիւն է դա, ուր երևան եկած երևոյթները շատ տխուր մտածութիւնների առիթ են տալիս։

Երևակայեցէք այսպիսի մի դրութիւն։ Բագուն ներկայ բոպէին Ռուսաստանի համար մի չափազանց կարևոր, չափազանց պատասխանատու դեր պիտի կատարէ։ Նա կանգնած է Պարսկաստանի և Անդրկասպեան երկրի սահմանների վրա, նրա մէջ արդէն երևացել են խօլերայի դէպքեր։ Ամբողջ Ռուսաստանը սպասում է թէ ինչ կասէ Բագուն. պիտի լինի՞ խօլերա թէ ոչ։ Այս հարցի պատասխանը պիտի նաւթաքաղաքը տայ։ Եթէ նա անկարող ու անբարեխիղճ է առաջվայ պէս, այն ժամանակ նա կը կատարէ 1892-ի տխուր դերը, տարածելով վարակիչ հիւանդութիւնը դէպի ամեն կողմ, իսկ եթէ այժմ նա փոքր ի շատէ պատրաստված է, բարեխղճօրէն աշխատել գիտէ, այն ժամանակ պէտք է սպասել, որ սարսափելի հիւրը Կասպից ծովի ափին կը գտնէ դիմադրութիւն, անինայ կռիւ իր դէմ և գուցէ կընկճվի ու այլ ևս այնքան մեծ սպառնալիք չի դառնայ միլիոնաւոր մարդկանց համար։

Բայց ի՞նչ է անում Բագուն։ Փնած է թէ գործում է։ Գործելու յարմարութիւններ շատ կան։ Ամեն կողմից ուշադրութիւն են դարձնում Բագուի վրա։ Կառավարութիւնը ներկայացուցիչներ է ուղարկում, որոնք ցուցմունքներ են տալիս, ծրագիրներ են առաջարկում, Բագուի նահանգական իշխանութիւնն էլ աշխատում է, քաղաքը ունի սանիտարական մեծ ժանաժողով։ Եւ ահա այդ ժանաժողովի նիստում, ուր ներկայ էր և նահանգապետը, խօսում են լայն հասարակական-բժշկական կազմակերպութեան մասին, դնվում կարևոր հարցեր, իսկ նոյն այդ միջոցին Բագուի իրականութիւնը ցոյց է տալիս իր անողորմ կերպարանքը։

Ժողովի մէջ յայտնի է դառնում, որ քաղաքին հարկաւոր են երեսուն բժիշկներ, մինչդեռ կան միայն ութ հատ։ Չը կան բժիշկներ, բայց այդ չէ նշանակում թէ Բագուում միայն 8—9 հատ բժիշկներ են գտնվում։ Ո՛չ, բժիշկները շատ կան, բայց նրանք չեն ուզում այսպիսի մի ժամանակ թողնել իրանց պրակտիկան և ծառայել հասարակութեան։ Եւ պ. նահանգապետը ստիպված էր յայտնել ժողովին, որի մեծ մասը բժիշկներից էր բաղկացած, թէ օրէնքով բոլոր բժիշկները պարտաւոր են աշխատել, թաղեր վերցնել քաղաքում, մինչև որ քաղաքը կը կարողանայ թաղային բժիշկներ հրաւիրել ուրիշ տեղերից։ «Վերջնակատնապէս և ամուր կերպով զնում եմ հարցը,—շարունակեց պ. նահանգապետը,—որ տեղային բժիշկները արձագանք տան քաղաքային ինքնավարութեան հրաւէրներին, յետոյ ես կը սկսեմ և պահանջել»։

Այս փաստը արդէն չափազանց լաւ է լուսաբանում թէ որքան պատրաստականութիւն ունեն Բագուի բազմաթիւ բժիշկները մի այսպիսի վճռական րոպէին, երբ հարիւր հազարաւոր մարդիկ մեծ յոյս ունեն նրանց վրա։ Հարկաւոր է իշխանութեան սթափեցնող ձայնը, որ հասկացնէ նրանց պարտաւորութիւնը։ Առանց հրամանի, առանց ստիպմունքի, նրանք չեն շարժվի իրանց տեղից, չը կայ սեփական ձգտում, չը կայ մարդասիրական և հասարակական զգացմունք։

Բայց նոյն ժողովը ցոյց տուեց, որ եղած բժիշկներն էլ, նրանք, որոնք պէտք է արդէն ի պաշտօնէ ստիպված լինեն գործել եռանդով, բարեխղճութեամբ, շատ և շատ հեռու են մխիթարական երևոյթ կազմելուց։ Ժողովի ժամանակ ներկայ եղողներից մէկը ժողովականների ուշադրութիւնն է հրաւիրում, որ կօրրիդօրում ման է գալիս մի տեղացի, որ ձեռքում ինչ որ տոմսակ ունի և չը գիտէ թէ ում պէտք է դիմել, որպէս զի թոյլատրութիւն ստանայ թաղելու խօլերայից մեռած մի կնոջ։

Իրողութիւնը հաստատվում է տեղն ու տեղը ոստիկանապետի հարց ու փորձով։ Եւ դուրս է գալիս, որ մեռածը ընկած է տանը, իսկ թաղել նրան չէ կարելի, որովհետև չեն գտնում այն բժշկին, որ պիտի թոյլատրութիւն տայ։

Դեռ այդ ծանր փաստը չէր հեռացել ժողովի մտքից, երբ մի նոր և աւելի վրդովեցուցիչ փաստ է լոյս ընկնում։ Ներկայ եղող բժիշկներից մէկը, ոմն պ. Կարաբէկով, յայտնում է, որ ինքը տեսել է մի քանի խօլերային հիւանդներ քաղաքի մի թաղում։ Եւ երբ նահանգապետը կամենում է իմանալ թէ արդեօք պ. բժիշկը յայտնել է այդ դէպքերի մասին ուր հարկն է, նա պատասխանում է թէ չէ յայտնել, այժմ է յայտնում։ Նահանգապետը իր պարտքը համարեց յանդիմանութիւն կարդալ այդ բժշկին և ցաւ յայտնեց, որ բժիշկները այդպէս են վարվում։

Այսքան փաստերն էլ բաւական են Բագուի պէս մի ահագին քաղաքի դրութիւնը լուսաբանելու համար։ Ուրեմն դուրս է գալիս, որ նիստեր կը կազմվեն, ճառեր կարտասանվեն, եւրօպական կարգերի մասին երկար ու բարակ կը դատեն, բայց իրականութեան մէջ տարրական բարեխղճութեան նշոյլ անգամ չի երևայ։ Միշտ ձևականութիւն, միշտ հանդիսաւորութիւն, միշտ ցուցամոլութիւն։ Բայց գործ։ Դուք տեսաք գործը։ Եւ երբ մտածում էք, որ հարիւր հազար մարդիկ ամեն առաւօտ կարդում են լրագիրներում թէ խօլերա կայ, բայց հանգիստ իրանց գործին են գնում, հաւատացած լինելով, որ մտածողներ, աշխատողներ կան,—դուք չէք կարող պահել ձեր զայրոյթն ու զզուանքը։

Ի՞նչ է այս բոլորը ցոյց տալիս։ Թողնենք Բագուն, մենք ամեն տեղ այդպէս ենք, միշտ մի և նոյնը, միշտ անչափահաս, միշտ առանց խնամակալութեան չենք կարող մի ինքնուրոյն քայլ անել մեր բախտը տնօրինելու համար։ Եւ հասկանալի է, որ այսպիսի մի անչափահաս, երեխայ հասարակութիւնը պէտք է տանջվի, պէտք է հազարաւոր զոհեր տայ ամեն մի պատահական թշնամու, լինի դա խօլերա թէ ժանտախտ, դիֆտերիտ թէ սով։

Դա շատ բնական է։

Լ.

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Անցեալ տարի այս ժամանակ գալիք տարին մենք անուանել էինք «թատրոնական տարի»։ Եւ իսկապէս, անցեալ սեզոնին Թիֆլիսում համարեա իւրաքանչիւր օր կայանում էին հայոց ներկայացումներ. դրամատիկական ընկերութեան, ժողովարանի սիրողների, Աբաքսեանի խմբի, ժողովրդական Աւճալեան և Հալաբարի Մուրաշկօի թատրոններում։ Բայց ի՞նչ մեց այդ բոլորից իբրև բաժին այս տարվայ համար. դրամատիկական ընկերութիւնը չէ ունենալու կանոնաւոր ներկայացումներ մինչև յունվար, եթէ չը հաշուենք մի երկու սարքվելիք ներկայացումները ընկերութեան սուղ միջոցները աւելացնելու համար։ Հալաբարի նոր թատրոնը պ. Արաքսեանի ղեկավարութեամբ չարդարացրեց հասարակութեան յոյսերը և քարշ է տալիս իր հոգեվարքը դրութիւնը շնորհիւ պատահական և սիրողների ներկայացումների, մինչդեռ դրամատիական ընկերութեան ձեռքին կարող էր մի պատկառելի գործ դառնալ։ Աւճալեան թատրոնի մասին վաղուց է ոչինչ չէ լսվում և նոյն իսկ այժմ հայոց ծառայողակիցները՝ ռուսները և վրացիները նոր ուժեղ խմբեր են կազմակերպում հարուստ բէպէրտուարով (օրինակ՝ ի միջի այլոց որոշել են խաղալ «Վանիշինի գաւակները»), մերոնք լէտարգիական քնով ննջած սպասում են երկնային մանանայի. չեն գումարում հին և նոր սիրողներին, չեն հոգում նոր ռէպէրտուար մշակելու, նոր սեզցիայի ընտրութեան պատրաստութիւններ տեսնելու և այլն՝ չէ՞ որ այսքան տարիներ գոյութիւն ունենալուց յետոյ՝ այնտեղ ևս արդէն ստեղծվել է յաճախողների որոշ կօնտիգէնտ, իսկ այդպիսիներին իւրաքանչիւր տարի մի և նոյն կերակրով կերակրելը կը սառեցնէ և կը հեռացնէ թատրօնից—մանաւանդ եթէ ի նկատի առնենք, որ վերջին տարիներս սիրողների մէջ աչքի ընկնող ոյժեր չեն երևացել։ Մուրաշկօի թատրօնում սիրող դեկավարների ուղղակի անձնուրաց ջանքերը կատարելապէս փշրվում են հասարակութեան սառնասրտութիւնից և ցաւով սրտի պէտք է արձանագրենք, որ եթէ մի քանի ժամանակ նրանց գործերը այսպէս շարունակվեն, արդէն ձայներ են լսվում, որ կարող են ներկայացումները բոլորովին վերջանալ նոյեմբերից։

Մնում են ժողովարանի սիրողների ներկայացումները, որոնք կազմակերպվում են սահմանափակ դասակարգի համար—ժողովարանի անդամների և նրանց ընտանիքների համար. այստեղ ինչպէս տեղեկանում ենք, շարունակվելու են նախորդ տարիների նման ներկայացումները երեքշաբթի օրերը և արդէն մշակված է բաւական հարուստ բէպէրտուար. թարգմանված են յատկապէս այդ բեմի համար 1) Հեղեղատ, դրամա 3 գործ. Մաքս Դալբէի, թարգմ. Կ. Շիրինեանի, 2) Սիբիրական, կօմ. 3 գործ. Ցազարելու, թարգմ. Գ. Միրաղեանի։ 3) Խուզարկու, կօմ. 3 գործ. թարգմ. Պ. Շահնազարեանի, 4) Մարդկութեան բարերարներ, դրամա 3 գործ. թարգմ. Մ. Համբարձումեանի, 5) Ամաղօններ, կօմ. 4 գործ. թարգմ. Կ. Շիրինեանի, 6) Դիմակահանդէսից յետոյ, վոդ. 1 գործ. թարգմ. Խոջա-Թումանեանի։ Խաղացվելու են դեռ այդ բեմի վրա չը խաղացված հետևեալ պիէսները. 1) Ճահճի մէջ, Խատիսեանի, 2) Մարվող ճրագներ, Ա. Աբէլեանի, 3) Զարագուշակ քայլ, 4) Վանիշինի գաւակները, Նայդէնովի, 5) Պէտք է բաժանվել, 6) Դաժանքեան սուր, Տէր-Գրիգորեանի։ Ռէժիսիօր ամենայն հաւանականութեամբ կը լինի պ. Գ. Միրաղեան, իսկ խումբը ստուարացել է նոր երկու սեռի անդամներով։ Ժողովարանը իր կողմից այս տարի ևս աւելացնելու է նոր դէկօրացիաներ և բեմի վրա աւելացնելու է յարմարութիւններ։

Ինչպէս տեսնում ենք, այս տարվայ թատրոնական սեզոնի առաջին մասի ամբողջ ծանրութիւնը ընկնելու է ժողովարանի սիրողների վրա, ուստի հարկաւոր է, որ նրանք առանձին ուշադրութիւն դարձնեն իրանց ստանձնած գործին և արդարացնեն իրանց վրա դրած յոյսերը. միանգամայն նպատակայարմար կը լինէր, եթէ ժողովարանը չը զանար առանձին վճար տալու և երբեմն դերասաններից հրաւիրելու իբրև գաստրոլիօրներ մասնակցելու դժուար դերերում։

Անյուշ

ՄԻ ԱԿՆԱՐԿ

—

Այս օրերս լսեցի թէ՝ եկող հոկտեմբերի վերջերում պիտի կատարվի Պարիզում պ. Ա. Մանթաշեանի ծախքով շինված հայոց եկեղեցու օծման հանդէսը և պիտի մատուցվի այդ եկեղեցում առաջին պատարագը։ Սակայն ոչինչ չէ լսվում թէ՝ եկեղեցին կառուցանողը կամ Պարիզի հայ գաղութը և մեր հոգևոր վարչութիւնը որ և է լուրջ նախապատրաստութիւն տեսնում են այդ բանի համար։ Հասկանալի է թէ՝ քաղաքակրթութեան մի ամենամեծ կենտրոնում այդպիսի հանդէս յայտարարելիս, պէտք է որքան կարելի է պատշաճ կերպով հանդէսը կազմակերպվի, քանի որ ընտիր հասարակութիւն և նոյն իսկ օտարազգի բարձրաստիճան անձինք հարկաւ հրաւիրված պիտի լինեն այդ առիթով։ Պարզ է, որ այդպիսի հանդէսի էական մասը, գլխաւոր համն ու հոտը պէտք է լինի անշուշտ կանոնաւոր եկեղեցական երգեցողութիւնը, որի մէջ կարտափայլէ մեր եկեղեցու հետաքրքրաշարժ ընորոշ ոգին։ Հայ եկեղեցին պիտի ներկայանայ արևմտեան Եւրօպային այս ոգով և հանգամանքին յարմար ծիսակատարութիւնով, և ոչ միմիայն իր չոր, թէկուզ շքեղ պատերով։

Այդ բանի աջողութեան համար, կարծում եմ թէ՝ ժամանակն է՝ անմիջապէս Պարիզ հրաւիրել մի հմուտ հայ եկեղեցական երաժշտագէտ։ Այդպիսին մենք ունենք նախ՝ յանձին նախկին սան պ. Ա. Մանթաշեանի, այժմ մեր հոգևոր ճեմարանի երգեցողութեան ուսուցչի՝ հ. Կօմիտաս վարդապետի. եթէ սրան աւելացնենք ներկայումս Պարիզում ապրող՝ յարգելի երաժշտագէտ օր. Մարգարիտ Բաբայեանի հմտալի աջակցութիւնը, անշուշտ պիտի աջողվի երկուսին շուտով կազմել մի արժա-

նաւոր քառաձայն երգեցիկ խումբ Պարիզի մեր երիտասարդ ոյժերից։ Օրիորդի պատրաստականութեանը՝ մասնակցելու իր երաժշտական մասնագիտութեան վերաբերող այդպիսի սուրբ գործին—մի բօպէ չեմ կասկածում։ Ցուսալի է թէ Վեհափառ Հայրապետը և ճեմարանական վարչութիւնը նաև չը պէտք է զլանան գէթ մի ամսվայ արձակուրդ տալու հ. Կոմիտասին այդպիսի մի նշանաւոր դէպքի համար։

Մեր երաժշտագէտ վարդապետը անկասկած այդպիսի դէպքի համար պիտի օգտվի ոչ միայն իր կազմած, այլ և Էկմալեանի պարտուրայից, որին մօտ ծանօթ է յարգելի օր. Մարգարիտը։ Ի դէպս անաչողութեան հ. Կոմիտասի Պարիզ գնալուն, մենք ունենք նաև փորձառու երաժշտագէտ՝ պ. Գրիգոր Միրզայեանին, որ այնքան աչողութեամբ կառավարում է Պետերբուրգի հայոց եկեղեցում երգեցիկ խումբը։ Հաւատի եմ թէ՝ այդ եկեղեցու պատուելի խորհուրդը, եթէ նրան դիմող լինի, սիրով պիտի արձակուրդ տայ իր խմբապետին Պարիզի նշանաւոր եկեղեցական հանդէսին մասնակցելու և կատարելու նոյնը, ինչ որ կարող էր կատարել հ. Կոմիտաս վարդապետը։ Վերջապէս՝ պէտք է յիշենք Պետերբուրգի կոնսերվատորիայի ուսանող երգիչ պ. Տ. Նալբանդեանին, որը գուցէ կարողանայ նաև մասնակցել այդ գործին, ծանօթ լինելով մեր եկեղեցական երգեցողութեան։

Իմ խորին համոզումս է, որ թէ՝ եկեղեցին կառուցանող բարերարը, թէ՝ Պարիզի գաղութը և մեր հոգևոր վարչութիւնը ոչ ջանք և ոչ ծախք չը պիտի խնայեն Պարիզի հայ եկեղեցական հանդէսը լաւագոյն կերպով ներկայացնելու եւրոպական հասարակութեան։

Երաժ. Նիկ. Տիգրանեան

Ալէքսանդրոպոլ

ՆԱՄԱԿ ՀԱՂԲԱՏԻՑ

Սեպտեմբերի 8-ին

Բոլոր շրջակայ գիւղերը վերջացրին իրանց կալերը և արդէն սկսում են ցանքը, սակայն մեր գիւղը այս տարի էլ չէ կարող ցանքս անել. հէնց այժմեանից հաղբատցին սկսել է ցորեն գնել, որովհետև ամբողջ գիւղը ցանքս չունէր, պատճառը գիւղացիների և կալուածատիրոջ մէջ. ծագած տարաձայնութիւններն են, որոնց պատճառով գիւղացիները մի քանի տարի է ինչ որ չեն օգտվում հողից։ Այս դրութեանը վերջ դնելու համար՝ ուսանող Ար. Երզնկեանը արծարծեց հաղբատցիների մէջ մի համակրելի միտք, այն է գնել կալուածատիրոջ նադել կոչված հողերը։

Միտքը ինքն ըստ ինքեան շատ գովելի է, սակայ գնելու այն ձևը, որ առաջարկում է պարոնը, գիւղացիների համար միանգամայն ֆնասակար և կորստաբեր է։ Առաջարկում է որ ոչ թէ ամբողջ համայնքը—գիւղը առնէ այդ հողերը, այլ ամեն մի անհատ առանձինառանձին։ Ով լաւ ծանօթ է գիւղացիների դրութեանը, նիստ ու կացին առհասարակ, պէտք է լաւ գիտենայ, որ այդ ձևը գիւղացիների համար դժբախտութիւն է, որովհետև հողը կը խլեն հարուստները, գիւղական վաշխառուները, իսկ ժողովուրդը կը մնայ նոյն աղքատը և հարստահարվածը։

Որովհետև հարցը ունի հասարակական նշանակութիւն, ուստի դնում ենք հրապարակի վրա և ցանկալի է, որ «Մշակն» յայտնէր իր կարծիքը այս խնդրի վերաբերմամբ։ Վերոյիշեալ խնդրի վերաբերմամբ ցաւալին այն է, որ պ. Երզնկեանը շնորհիւ իր ունեցած ազդեցութեան մեր շրջակայ գիւղերի, մանաւանդ հաղբատցիների վրա, կարող է խնդիրը լուծել տալ այդպիսի բացասական ձևով։ Խորհուրդ կը տայինք պ. ուսանողին մի քիչ մտածել։

Խոլերայի երկիւղը մեր գիւղն էլ է ցնցել. մաքրութեան տեսակէտից, պէտք է ասել, որ գիւղը վերջերս մաքուր է պահվում։ Գովելի էր պ. Երզնկեանի եռանդը այդ խնդրում. նա բահը վերցրած, գիւղացիների հետ միասին ուղղակի մաքրում էր գիւղի անասունների աղբը և բացատրում մաքրութեան նշանակութիւնը խոլերայի դէմ կռուելու խնդրում։

Տ. Բ.

ՆԱՄԱԿ ԱՐՄԱՒԻՐԻՑ

Սեպտեմբերի 2-ին

Արմաւիրն ալ առաջիկայ ձմեռնամուտին պիտի ունենայ իր փողոցային էլեքտրական լուսավառութիւնը։ Ահա առաջադիմական գովելի քայլ մը ևս զոր արմաւիրցին չը զլացաւ անելու դէպի քաղաքակրթութեան ասպարէզը ու այսօր նա պարծենկոտութեամբ է ասում, թէ շատ չանցնի կունենանք նաև ելեկտրաշարժ արագընթաց framway-ը, որ Քուբանի գեղածիծաղ ափունքը ճեղքելով պիտի հաղորդակցի մօտակայ այգիների ու պարտէզների հետ։

Իսկապէս՝ դա մի քիչ չափազանցուած փափաք է, որ գուցէ առժամապէս թէօռէթիք վիճակ մունենայ, այսուամենայնիւ արտայայտում է արմաւիրցիին ձգտումը դէպի այն, ինչ որ նոր է, շքեղ և փառաւոր։

Արդէն՝ աքցիոներական ընկերութիւնը, որու մեծամասնութիւնը կազմված է տեղացի չէրքէզահայ կապիտալիստներէ, վաղուց է սկսած է գիւղաքաղաքի կենտրոնում կառուցանել ելեկտրական ցէնտրալը, որ քիչ ժամանակից պատրաստ կը լինի նախագծված ելեկտրական զանազան ճիւղերուն էնէրգիա հայթայթելու։

Նոյն ընկերութիւնը պիտի ունենայ ևս առանձին բաժին մը պրիվատներու համար զոր ըստ երևոյթին բաւական մեծաքանակ է սրանց թիւը։

Ելեկտրական շինութեանց ընդհանուր վերհսկողութիւնը յանձնված է երևանցի ինժէնէր-տեխնօլոգ պ. Այվազեանցին, որ իր ելեկտրօ-տեխնիքական բաղմակողմանի հմտութեամբը գոհացում է տալիս նորաշէն ցէնտրալի ամեն մի պահանջներուն. յիշեալ անձնաւորութիւնը անդամակցում է ակցիոներական ընկերութեան իր գիտական գործունէութեամբը։

Արմաւիր կարճ ժամանակվայ ընթացքում զգալապէս մեծացաւ. գիւղաքաղաքի ամեն մի կողմում տեսնվում են նորանոր շէնքեր, ինչպէս դպրոցներ, կլուբներ, գործարաններ և այլն. դրանք ամենն ալ գնահատելի են, քանի որ առաջադիմական ձգտումներ են ցոյց տալիս, սակայն փափագելի էր, որ չէրքէզահայը մի քիչ աւելի հոգ տանէր իր երեխաներին հայերէն լեզուն սովորեցնելու մասին. ցաւալի է տեսնել հայ փոքրիկ տղաքներ, որք մայրենի լեզուի և ոչ իսկ այբուբէնը գիտեն։

Փ. Մանուկեան

ՆԱՄԱԿ ԹԷՕԴՕՍԻԱՅԻՑ

Սեպտեմբերի 4-ին

Վախճանվեց Թէոդոսիայի հայ քահանան էլ, և այժմ երևի այստեղի հայ համայնքն էլ մի ամբողջ տարի, եթէ ոչ աւելի, կը մնայ առանց քահանայի, ինչպէս եղան Մելիտոպոլը, Ղարասուբազարն ու Նոզայսկ քաղաքները, թէև այս էլ պէտք է շեշտել, որ Թէոդոսիայի հայ հասարակութիւնը մի քահանայի համար՝ ապահով ծուխ է կազմում, հետևապէս հովուելու ցանկութիւն ունեցողների դիմումներն արդէն կարող են որոշ չափով ստիպել հասարակութեանը այդ հարցով զբաղվելու...

Ղրիմի՝ հայկական կենտրոններից միանգամայն անջատ՝ հայ գաղթականութեան համար անշուշտ շատ մեծ նշանակութիւն ունի քահանան։ Յամենայն դէպս նախազգուշացնում ենք Թէոդոսիայի հայ հասարակութեանը՝ չընկնել քահանայական թեկնածուներ առաջարկող անձերի ազդեցութեան տակ և չը զեկավարվել անձնական տրամադրութիւններով ու տպաւորութիւններով. դա սխալ ընտրութիւնների պատճառ կարող է դառնալ, որի շնորհիւ և ժողովուրդը կը տուժէ ամբողջ տարիների ընթացքում, ինչպէս տուժել է մինչև այժմ։ Մի խումբ ժողովրդի հովուութեան զեկը ստանձնող անձը պէտք է նախ կրթված լինի, կանոնաւոր պաշար ունենայ քահանայական պատասխանատու պաշտօնը համապատասխան գործունէութեամբ վարելու համար։ Այլ ևս անդառնալի կերպով անցան այն ժամանակները, երբ քահանաներ ընտրում էինք բացառապէս «մէկին աւազան, միւսին գերեզման» կոխելու համար։

Անկասկած մեր Ղրիմի միւս հայաբնակ քաղաքների քահանաներից մի քանիսը կուզենան գրաւել Թէոդոսիայի հովուութեան պաշտօնը։ Սակայն այս դէպքում առաջին տեղը պէտք է բռնէ այն հարցը, թէ՝ պիտի կարողանան արդեօք դրանք գոհացնել ժողովրդի ներկայ պահանջները։ Այստեղ ստիպված ենք միանգամայն բացասական պատասխան տալ։ Դրանք «աւազանի» և «գերեզմանի» շրջանից դուրս մի այլ աւելի արդիւնաւէտ գործունէութեան մասին խորհողներ երբէք չեն կարող լինել, որովհետև բոլորն էլ (բացառութեամբ գուցէ Ղարասուբազարի Ասրեան նորընծայ քահանայի, որին չենք ճանաչում տակաւին) հինհին հասկացողութիւնների ծնացորդներ են։

Պէտք է այս հանգամանքները լաւ իմանայ Թէոդոսիայի հայ հասարակութիւնը և ընտրէ այնպիսի հովիւ, որ կարողանայ օգտակար լինել մի բուռն, օտարացման հողի վրա կանգնած, ինքնուրոյնութիւնից կատարելապէս զուրկ ժողովրդի համար։

Յ. Գ. Լսեցի, որ Թէոդոսիացիները դիմել են Խարկովի հովիւ Սրապիոն քահանայ Սամուէլեանցին, սակայն նա բացասական պատասխան է տուել։

Սուրխաթեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» հետևեալ համարը Ս. Խաչի տօնի և նրան յաջորդող Մեռելոցի օրվայ պատճառով լոյս կը տեսնէ չորեքշաբթի 15 սեպտեմբերի։

Բագումում սեպտեմբերի 7-ին խոլերայի նմանութիւն ունեցող հիւանդութեամբ հիւանդացել է մի ռուս կին. 8-ին հիւանդացել են երկուսը—մի թուրք, որ վախճանվեց 9-ին և մի ռուս, որ տարված է հիւանդանոց։

Ինչպէս հաղորդել էինք, Թիֆլիսի քաղաքային խորհուրդը խնդիր էր ներկայացրել մինիստրութեան, որ թոյլատրութիւն ստանայ մի պրոգիմնազիա բաց անելու Հալաբարում։ Այդ խնդիրը մերժվել էր և առաջարկվել, որ քաղաքը բաց անէ 8 դասարանեան միջնակարգ տեխնիքական դպրոց և այդ էլ այն պայմանով, որ քաղաքը վճարէ առնուազը տարեկան բոլոր ծախքերի 1/2-ը և միանուագ ծախքի 1/3-ը (165,000 ր.)։ Քաղաքային վարչութիւնն իր անցեալ օրվայ նիստում որոշեց յանձնել այդ հարցը ուսումնարանական յանձնաժողովին՝ մանրազննին հետազօտութեան ու քննութեան համար։

Թիֆլիսի նահանգապետն առաջարկել է քաղաքի ոստիկանապետին և իր նահանգի բոլոր գաւառապետներին, որ ամենակարճ ժամանակում իրան հասցնեն մանրամասն տեղեկութիւններ Հեռաւոր Արևելք գնացած բոլոր զինուորների ընտանիքների մասին, հաղորդելով մանրամասնութիւններ ամեն մի ընտանիքի անդամների թւի և նրանց տնտեսական վիճակի մասին։

Ժողովրդական լուսաւորութեան կենտրոնական վարչութիւնը հաղորդել է դպրոցական շրջանների հոգաբարձուներին, որ գիւղատնտեսական միջնակարգ դպրոցներն աւարտած անձերն իրաւունք ունեն տարրական դպրոցների ուսուցիչ լինելու՝ առանց քննութեան, տալով միայն մի փորձնական դաս։

Կովկասեան աւազակներն օգտվում են ռուս-եապօնական պատերազմից։ Նրանք մի բան են սովորել «բանդայ» և դրանով իրանց եապօնացի են ցոյց տալիս։ Մոզդոկ քաղաքի մօտերը սայլապանների վրա յարձակվում են օս աւազակներ և, իրանց եապօնացի ձևացնելով, կողոպտում սայլորդներին, վիրաւորում և լծկանները քշում տանում, պատուիրելով սայլապաններին, որ ոստիկանութեան յայտնեն, «թէ եապօնացիներն են իրանց կողոպտել»։ Բայց վիրաւորներից մէկը ճանաչում է օսերին և Կովկասի «եապօնացիներն» այսօր բանդումն են։

Մեզ խնդրում են հաղորդել, որ այսօր, կիրակի, սեպտեմբերի 12-ին, Հալաբարում—Արաքսեանի թատրօնում, հայ և վրաց թատերասէրների խումբը, մասնակցութեամբ պ. Սողոմոնեանի, կը ներկայացնէ հայերէն լեզուով «Թուղթ խաղացողի կեանքը» ֆրանսիական մելոդրամն։ Այդ ներկայացմանը իրանց մասնակցութեամբ հանդէս են գալու սիրողներից լաւագոյն ոյժերը։ Ցանկանալով ներկայացումը ժողովրդական դարձնել, տեղերի գները նշանակված են մատչելի և արժան 10-ից մինչև 50 կոպէկ։ Սկիզբն է 8½ ժամին երեկոյեան։

«Русь» լրագիրը հաղորդում է, որ գերմանական կայսր Վիլհելմ II-ը մօտ ժամանակներս գալու է Ռուսաստան և յատկապէս—Սկէրնէվիցա քաղաքը, սահմանի մօտերը։

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 5-ին կայացաւ ներկայացում յօգուտ տեղիս հայոց-ծխական դպրոցի, մասնակցութեամբ դերասան Ստեփանեանի։ Խաղացին «Ժան Բօդրի» կոմէդիան և «Փաստաբանի մօտ» վոդէվիլը։ Խաղը ընդհանրապէս աչող էր։ Լաւ կը լինի, որ պիէս ընտրելիս մեր կեանքից շատ չը հեռանան։ Շնորհակալութեան արժանի են սիրողները, որոնք չը խնայեցին իրանց սուղ ժամերը նուիրել այդ հասկանալի նպատակին։ Ծախսերը հանած զուտ արդիւնք մնաց 120 ռուբլի»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

Եօթն ամիս պատերազմ

Շարունակում ենք առաջ բերել «Рус. Вѣд.» յօդուածը պատերազմի հետևանքների մասին։

Հաստատելով, որ Ռուսաստանը շատ քիչ տեղեկութիւններ ունէր Եապօնիայի, նրա պատերազմական ոյժերի և բէսուրսների մասին, որ եապօնական լեզու իմացող շատ քիչ մարդ կար Ռուսաստանում, որ նոյն իսկ Պետերբուրգի հատալսարանի արևելեան լեզուի ֆակուլտէտում և Մոսկվայի Լազարեան ճեմարանում անկարելի եղաւ գտնել եապօնագէտ՝ թարգմանչի պաշտօնի համար, լրագիրը գալիս է հետևեալ եզրակացութեան. «Շատ հաւանական է, որ մենք չունէինք ճշգրիտ և մանրամասն տեղեկութիւններ Եապօնիայի ոյժերի, նրա պատերազմական պատրաստութիւնների և նրա իսկական դիտաւորութիւնների մասին, այլապէս մենք ևս մեր կողմից նախապատրաստված կը լինէինք։ Սակայն հաւանական է և այն, որ կային այնպիսի տեղեկութիւններ, որոնց հիման վրա կարելի էր գուշակել թէ ինչ վտանգ է սպառնում մեզ, բայց մենք անհրաժեշտ միջոցներ ձեռք չառանք նրա համար, որ վտանգը չափազանցրած կամ ցնորական էինք համարում։»

Ընդհանուր կարծիքով, շարունակում է ռուս լրագիրը, մեր ամբողջ յոյսը այժմ դրել ենք մանջուրական բանակի վրա այն նկատումով, որ երբ նա ստանայ աջակցութիւն, նա եապօնական բանակից աւելի ուժեղ կը դառնայ և կարող կը լինի յարձակողական դիրք դռնել, արշաւել Թշնամու դէմ, փոխանակ նահանջելու։ Շեշտելով, որ չը նայելով Սիբիրի երկաթուղու փոխադրութիւններին ամբողջ 7 ամիս, Կուրոպատկինը այնու ամենայնիւ աւելի քիչ զօրք ունէր Լեաօեանի կուսի ժամանակ, քան Եապօնիան, շեշտելով և այն, որ նա այժմ ևս այնքան ոյժ չունի, որ կարողանայ եռանդուն արշաւանք սկսել, լրագիրը ցոյց է տալիս, թէ ինչ պէտք է անել՝ հայթհայթելու համար Կուրոպատկինին աւելի մեծ ոյժեր, որոնցով նա կարողանայ վերջապէս ազատվել անխուսափելի նահանջումներից և դիմել լուրջ արշաւողական գործողութիւնների։ Եթէ ճիշդ է, որ եապօնացիները ունեն Կուրոպատկինի դէմ 250,000 հոգի, պարզ է, որ Կուրոպատկինը պէտք է մինիմում ունենայ 300,000, իսկ եթէ նրանք ունեն 300,000, նա պէտք է ունենայ 350,000, նոյն իսկ աւելի։ Ընդունելով նոյն իսկ, որ Սիբիրի երկաթուղին կարող է ծառայել միայն 165 օր և ամեն օր ուղարկելով չորս-հինգ գնացք, ամեն մէկը 3000 զինուորներով, թւում է թէ այս 7 ամսվայ ընթացքում կարելի կը լինէր ուղարկել Մանջուրիա 500,000 զօրք։ Սակայն, իրականապէս, ինչպէս գրեց Նեմիրովիչ-Դանչենկօն, լինում էին միջոցներ, երբ տասը և աւելի օրեր մի հատ պատերազմական գնացք անգամ չէր անցնում։ Անկասկած, հեշտ բան չէ զօրքերի անագին քանակութիւն ժողովելը, ուղարկելը և նրանց բոլոր անհրաժեշտ կարիքներ մատակարարելը, բայց երբ զօրքը թոյլ է, այդ մի և նոյն գործը աւելի դժուարանում է նրանով, որ ստիպված են լինում նահանջել, հետևաբար, այրել, ոչնչացնել արդէն պատրաստված պաշարները։ Որքան ոյժերը շատ լինեն, այնքան—ուրիշ հաւասար պայմանների մէջ—աւելի հաստատ կը լինի աջողութիւնը, աւելի հեշտ յաղթութիւնը, այնքան աւելի բարձր կը լինէր զօրքերի ոգին և այնքան աւելի քիչ ֆնասները և զոհերը, քան այն դէպքում, երբ պէտք է նահանջել աւելի ուժեղ թշնամու յարձակման երեսից, ձգելով ամբացրած դիրքերը, թնդանօթները, պաշարները պահեստները...

Ցոյս չունենալով, որ եապօնացիները կարող են այնքան ոյժեր ունենալ, ինչ որ յայտնվեց իրականութեան մէջ, ըստ երևոյթին, մեզ մօտ չէին սպասում և այն բանին, որ եապօնական զօրքը «լուրջ զօրք» է և «ըստ իր կազմակերպութեան, ըստ զինուորական ոգու և քաջութեան»—բարձր է եւրոպականից, որը, «նոյնպիսի պայմաններում, կը ջարդէր և ամեն մի եւրոպական զօրք»։

ՆԱՄԱԿ ՊԱՐԹԿԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, օգոստոսի 21-ին

Սրանից մի քանի օր առաջ քրդերը թալանեցին Ենգիջա և մի քանի ուրիշ գիւղեր-

նախ տարել են դրանց նախիրը ու հօտերը, ապա երկրորդ անգամ եկել են թալանելու տան կարասիները։

Այսի 17-ին քրդերը քշեցին Հին-Բաղաքի նախիրը, հօտը և 50—60 ձի և ջորի. ձիաւորներից մի քանի հոգի հետևել են, բայց ոչինչ չեն կարողացել անել։ Այսի 20-ին քրդերը յարձակվում են Այեան կոչված գիւղի վրա, թալանում նախիրը, հօտը և ապա տանը։ Պատմում են իբր թէ տեղի են ունեցել բռնաբարութիւններ, ծեծ և տանջանքներ. հայերը ազատ են եղել այդ չարագործութիւններից. ժողովրդի մէջ այն համոզմունքն է տիրում, որ իբր թէ այդ թալանները տանողը Ջաֆար-աղան է, որը վրիժառութեամբ է պարապում։

Այեանցիք, կին և մարդ, թափվել էին Դիլման, քարկոծում էին բոլոր խանութները, թէ «բոլորդ թողէք ձեր գործը և գնանք հեռագրենք թագաժառանգին, իմաց տանք նրան մեր ցաւը, թող մի ճար անի մեզ»։ Դիլմանի շուկան փակվեց, ոչ մի խանութ չը մնաց բաց. այեանցի կանանց լացն ու կսկիծը, կատաղի յարձակումն խանութների վրա մի սրտաշարժ տեսարան էր ներկայացնում։ Ֆատի-Սուլթանը հեռագրատունը կողպել էր տուել և չէր թողնում, որ ժողովրդի բողոքը, դառն բողոքը հասնի ուր հարկն է. ահա այդպէս է այստեղ. չը նայած, որ բարձրագոյն իշխանութիւնը միշտ մտածում է ժողովրդի բարեկեցիկ և ապահով դրութեան մասին, բայց նրա ստորին պաշտօնեաները ամեն կերպ աշխատում են լռեցնել տալ բողոքողին և ամեն ինչ ըստ իրանց քմահաճոյքին կարգադրել։ Մինչև այժմ թոյլ չէ տրված, որ հեռագրեն թագաժառանգին ինչպէս Այեանի, նոյնպէս և Հին-Բաղաքի թալանների մասին։ Տեսնենք հետևանքն ինչ կը լինի։

Կալերը համարեա թէ վերջացել են. բերքը այս տարի ընդհանրապէս վատ էր Սալմաստում. ցորենը միջին թւով մէկին չորս է կտրել, այնպէս որ համարեա թէ ճնաս է արել։ Ցորենի բեռը ծախվում է 5—6 թուման. գարի չէ ճարվում, բեռը ծախվում է 35 դրանից—4 թուման։

Հարուստները ցորենները ամբարել են և սպասում են աւելի թանգ ծախելու. վայ աղքատներին։

Սպասվում է, որ ցորենի գինը կը բարձրանայ մինչև ութ թուման։

ՈՒ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Տրապիզոնում Կայծակ աղա Արաբեանի սպանութեան փորձի առիթով բանտարկված պատանիներից (ամենից մեծը 21 տարեկան է) 4-ը 101 տարվայ և 28-ը 10—15 տարվայ բանտարկութեան դատապարտվեցին։ Կայծակ աղա Արաբեանը թուրք պահապանով է պտտում փողոցում։ Ինչ վերաբերում է խաղաղութեան, դա այնքան մակերեսային է, որ չէ կարելի երաշխաւոր լինել վաղվան համար։ Վաճառականութիւնը բոլորովին կանգ է առել, իսկ արհեստները մեռնելու մօտ են։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

10 սեպտեմբերի

ՎԻԼՆԱ, 10 սեպտեմբերի։ Զարդարված քաղաքում տիրում է առանձին շարժում կայսրանի մօտ, ուր սաքքված է բիւրօ տեղեկութիւնների համար։ Անդադար ժամանում են նոր հիւրեր։ Եղանակը փչացաւ։ Ութ և կէս ժամին, եպիսկոպոսական ժամասացութիւն սկսելու վայրկեանին տաճարում, թնդանօթաձգութեան հինգ հարւածներով ազդարարվում է քաղաքին Եկատերինայի արձանի բացման հանդէսը սկսվելու մասին։ Ինն և կէս ժամին դէպի Եկատերինեան սկվէրն են գալիս ուղղափառ և օտարադաւան հոգևորականութիւնները և Վիլնայի, Կովնօի, Գրոդնօի, Մինսկի, Մոգիլէվի և Վիտէբսկի նահանգներից ազնուականների, գիւղացիների և դպրոցների պատգամաւորութիւնները և հանդէսին հրաւիրված անձինք։ Արձանը գտնվում է մայր եկեղեցու հրապարակի վրա։ Ամբողջ հրապարակը լի է ամբոխով։ Կարգը օրինակելի է։ Եկատերինայի արձանի հանդիսաւոր բացումից յետոյ տեղի ունեցաւ զօրահանդէս և ապա նախաճաշ ներքին գործերի մինիստրի մօտ 500 անձանց համար։ Արքայական կենացներից և իշխան Դրուցկի-Լիւբեցկիի կարդացած պատմական ճառից յետոյ, գեներալ Բօգդանովիչ ճառ արտասանեց։

ԷԴԻՆԲՈՒՐԳ, (Ռէյտէր)։ Սեպտեմբերի 9-ին երեկոյեան միջազգային իրաւունքի ինստիտուտի անդամների պատուին տուած տօնախմբութեանը Բօզբէրի օտարազգի հիւրերի կենացն առաջարկեց, որի ժամանակ առանձնապէս ողջունեց ռուս պրոֆէսոր Մարտէնսին, որին ուղարկելով Ռուսաստանը՝ առանձին պատիւ արեց ինստիտուտին։ Ապա հռետորը նկատեց, որ անմտութիւն կը լինէր հերքել յայտնի մրցութեան գոյութիւնը Ռուսաստանի և Անգլիայի միջև, բայց չէ՞ որ Ասիայում բաւական տեղ կայ երկու պետութիւնների համար ևս և թէ այդ ընդունվէր թէ մէկի և թէ միւսի կողմից, դա կը ծառայէր ի նպաստ ընդհանուր խաղաղութեան։ Մարտէնս պատասխանեց։

ՎԻԼՆԱ, 10 սեպտեմբերի։ Վիլնայի ազգաբնակութիւնը ահագին խմբերով գումարվելով կանաչով, եռագոյն դրօշակներով և գորգերով զարդարված քաղաքային փողոցներում, անկեղծ ողջունում էր այսօրվայ հանդէսին փողոցով անցնող ժանակիցներին։ Ռուս, լիտվայեան, լեհ և հրէայ ազգաբնակութիւնը միանման արտայայտում էին իրանց զգացմունքները և աշխատում էին արտայայտել իրանց ուրախութիւնը և միաբանութիւնը։ Այդ բանը մանաւանդ ապշեցնում էր օտարազգիներին, որոնք եկել էին այստեղ տօնախմբութեան առիթով և ակնայայտնի կարող էին համոզվել և տեսնել առանց ազգութեան խտրութեան Վիլնայի բոլոր բնակիչներին ոգևորող զգացմունքը։ Եկատերինա II-ի արձանի օրհնութիւնը նրանով մանաւանդ կարևոր է, որ ցոյց է տալիս, թէ մի աւելորդ քայլ ևս արված է ռուսների հետ լեհերի բարեկամանալու ճանապարհի վրա։ Ենթարկվելով իշխան Սվեատոպոլկ-Միրսկու արդար և խաղաղացնող քաղաքականութեան հմայքին, լեհերը սրտագին արձագանք տուին այդ հանդէսին ներկայ լինելու կոչին։ Լեհական ամենանշանաւոր տուհերի մինչև 60 ներկայացուցիչներ իրանց պարտքը համարեցին ներկայ լինելու այսօրվայ տօնախմբութեանը, ընդունելով կատարված դէպքի հարիւրամեայ վաղեմութիւնը, որը անխզելի կերպով միացրել է հիւսիս-արևմտեան երկիրը Ռուսաստանի հետ, նրանք նրանով կամեցան ցոյց տալ իրանց օրինականութիւնը և իրանց անկեղծ ցանկութիւնը՝ ամեն բանում հաւատարիմ հպատակ լինել ռուսաց Ցարին, պաշտօնական բոլոր ժողովուրդների յոյսին։

ՊԱՐԻԶ, 10 սեպտեմբերի։ Նախկին մինիստր Լանէսսան քաղաքական գործիչների մի խմբի հետ շարունակում է համոզել կառավարութիւնը, որ սա միջնորդութեան նախաձեռնութիւն յանձն առնէ ռուս-եապոնական պատերազմի մէջ, այդ պատճառով կիսապաշտօնական «Temps» լրագիրը մի յօդուած տպեց, յայտնելով, որ Ֆրանսիան չէ կարող միջնորդութիւն սկսել, քանի որ Ռուսաստանը հրաժարվում է վճռական համարել առաջին ընդհարումների հետևանքները։ Մենք Ռուսաստանի դաշնակիցներն ենք,—աւելացնում է մինիստրական օրգանը,—և չենք կարող մարդասիրութեան պատրուակով Ռուսաստանի վերաբերմամբ այդ ոչ այնքան բարեկամական վարմունքը թոյլ տալ։—«Տօկիօից «Temps» լրագրին նրա թղթակցի կողմից ուղարկած նամակի մէջ թղթակիցը թմբուկ է զարկում Հնդկա-Չինաստան ներս խուժելու վտանգի մասին։ Նա յայտնում է, որ եապոնական գլխաւոր շտաբը մշակել է արդէն համապատասխան պլան և որ Հնդկա-Չինաստանը հեղեղված է եապոնական լրտեսներով։ Սիամում թափառում են ամեն կողմ հագուստներ փոխած եապոնական օֆիցէրներ։ «Այդ վտանգի առաջ,—ասում է թղթակիցը,—մենք պէտք է ջերմ կերպով ցանկանանք Ռուսաստանի վերջնական յաղթութիւնը և ունենանք մշտապէս Միջերկրական ծովում զօրեղագոյն էսկադրա, որը պէտք է պատրաստ լինի գնալ Հնդկա-Չինաստան պահանջած բօպէին։»

ՏՕԿԻՕ, 10 սեպտեմբերի։ (Ռէյտէր)։ Պաշտօնական հեռագիրը հաղորդում է սեպտեմբերի 7-ին տեղի ունեցած կռիւների մասին Դալնիի և Սանլուսնկուի մօտ, 96 կիլօմէտր գէպի հիւսիս-արևելք Լեաօեանից։ Եապոնական զօրաբաժինը, Սեանչուանից արշաւելով, յարձակում գործեց և յետ մղեց դէպի հիւսիս ռուսական երկու զօրաբաժին։ Նրանցից մէկը, որ բաղկացած էր հետևակ մի վաշտից, հեծելազօրքով և մէկ գնդաձիգով, գտնվում էր Դալնեան լեռնանցքի վրա, իսկ միւսը, որ բաղկացած էր մի հետևակ բատալիօնից, 500 ձիաւորներից, 5—6 արագաձիգ թնդանօթներից և մի գնդաձիգից, կանգնած էր Սանլուսնկուի մօտ, 13 կիլօմէտր Դալնիի լեռնանցքից հիւսիս։ Ռուսներից սպանվեցին 69 մարդ։ Եապոնացիների ձեռքն անցաւ մի քիչ աւար։ Նրանց կորուստներն աննշան են։

ՕԴԵՍՍԱ, 10 սեպտեմբերի։ Բաղաքապետի կեանքի դէմ եղած փորձի ականատեսները ասում են, որ յանցագործի արտաքինը ինտելիգենտ չէր։

ԿԻԵՎ, 10 սեպտ։ Կիեվ կայարանն է բերված Լեաօեանի մօտ օգ. 15-ին մահացու կերպով վիրաւորված գեներալ-մայոր Մարտսոնի դիակը։ Կայարանում հաւաքվել էին զօրքերի գլխաւոր հրամանատարը, շտաբի գլխաւորը և հանգուցեալի բազմաթիւ բարեկամներն ու հաճախորդները։ Դրվեցին պսակներ։ Դիակն ուղարկված է Պոդոլի նահանգը հանգուցեալի կալուածում թաղելու համար։

ՆԷԱՊՕԼ, 10 սեպտ։ Վէզուվի վրայի դիտարանը հաղորդում է, որ Վէզուվը ցոյց է տալիս կենդանի գործունէութիւն։ Հրաբխային կաթսայի բերանի ափերը քանդվել են և սպառնում են ծածկել խառնարանը որից դուրս են նետվում ահագին քանակութեամբ քարեր, փոշի և լաւա, որը հոսում է դէպի Աարիօ-դէլ-Կավալլօ։ Կազմվում են մանր հրաբուխներ, որ փոշի ու քարեր են շպրտում մինչև 150 մէտր բարձրութիւն։ Մեծ գագաթի վրա նկատվում են խոշոր ճեղքվածներ։ Կարելի է, որ այդ գագաթը փուլ գայ։

ՎԻԼՆԱ, 10 սեպտ։ Առաւօտեան ժամը 10-ին ժամանեց Մեծ-Իշխան Միխաիլ Ալէքսանդրովիչը. նրան դիմաւորեց ներքին գործերի մինիստրը։ Դրված է պատուաւոր պահակ օրէնբուրգեան գնդից՝ զօրքերի հրամանատարի և միւս գլխաւորների առաջնորդութեամբ։ Դիմաւորեցին նոյնպէս նահանգապետը, նահանգի ազնուականների պարագլուխը, քաղաքագլուխը, գեներալ-նահանգապետի դիւանի կառավարիչը, ոստիկանապետը։ Երբ գնացքը մօտեցաւ կայարանին, վագօնից դուրս եկաւ Մեծ-Իշխանը։ Հաւաքված ժողովուրդը Նորին Բարձրութեանն ընդունեց ոգևորված «ուրա»-ով։ Ողջունելով պահակին, Մեծ Իշխանն աղ ու հաց ընդունեց քաղաքի կողմից և ողորժաբար խօսակցեց քաղաքի դրութեան և կարիքների մասին մինիստրի, նահանգապետի և քաղաքագլխի հետ։ Յետոյ Նորին Բարձրութիւնը մինիստրի հետ միասին կառքով գնաց հանդիսավայրը։ Կայարանի առջևի հրապարակում աղ ու հաց ներկայացրին գիւղացիները։ Ազնուականութեան պարագլխի կազմած հիւրասիրութեան ժամանակ Մեծ-Իշխանը բարեհաճեց առաջարկել Հիւսիս-Արևմտեան Ռուսաստանի ազնուականութեան կենացը, իսկ յետոյ ողորմածաբար խօսակցեց տեղական ազնուականութեան ներկայացուցիչների հետ։ Թնդանօթի որոտների ժամանակ վայր ընկաւ քողը Եկատերինա Մեծի արձանի վրայից, որը արծաթի աչքերով դիտում է բուն ռուսական երկիրը։ Ընդհանուր հրճուանքը, մուզիկան և Կայսրի դեսպան Մեծ Իշխանի ներկայութիւնը, հոգևորականութեան փայլուն խումբը, եկեղեցական երգեցողութիւնը—բարձրացնում էին պատմական այդ բօպէի նշանակութիւնը։

ՄՕՍԿՎԱ, 10 սեպտ։ Պրեչիստեան փողոցում դրվեց նոր տեխնիկական դպրոցի հիմքը։ Շէնքը կը նստի 250,000 ռուբլի։

ԲԵԼԳՐԱԴ։ (Ցատուկ)։ Սեպտեմբերի 9-ի երեկոյեան պալատում տեղի ունեցաւ մի մեծ ու փայլուն ընդունելութիւն։ Սեպտ. 10-ի առաւօտեան կայացաւ հակայական-համերգ բոլոր նուագածու միացած խմբերի կողմից, իսկ յետոյ կայացաւ մի մեծ նախաճաշ պալատում ի պատիւ բոլգարական պատգամաւորութեան։ Կէսօրից յետոյ Բանիցայում տեղի ունեցան մեծամեծ ձիարշաւներ։

ՖԼԷՆՍԲՈՒՐԳ, 9 սեպտ։ Երեկոյեան մեռաւ ռուսական հիւպատոս Սօֆուս Շմիդտը։

11 սեպտեմբերի

ՎԻԼՆԱ, 10 սեպտ։ Հասնելով արձանի մօտ, Նորին Բարձրութիւնը անցաւ շարքով կանգնած զօրքերի միջով, ընդունեց արձանի շինութեան յանձնաժողովի ներկայացուցիչներին, այլադաւան հոգևորականներին, մի քանի բարձրաստիճան պաշտօնեաների, նոյնպէս և պատգամաւորութիւններ։ Դրանից յետոյ կաթոլիկ հոգևորականութիւնը եպիսկոպոսին գլուխ ունենալով՝ գնաց մայր եկեղեցին ժամասացութեան։ Ժամը 11½-ին Եկատերինեան սկվէր եկաւ Նիկոլայեվսկի տաճարից ուղղափառ հոգևորականութիւնը։ Թափորով գալու ժամանակ՝ ճանապարհին կատարվեց մաղթանք։ Թափորը հսկայական և աստուածահաճոյ էր. նրանում մասնակցում էին 80-ի չափ հոգևորականներ։ Հասնելով արձանի մօտ, արքեպիսկոպոսը կատարեց պէտք եղած ծէսը և մի կարճ քարոզ ասաց։ Արձանի վրա բազմաթիւ պսակներ դրվեցին։ Երեկոյեան կամաւոր հրդեհաշէջների նուագախումբը պալատի առջևի փոքրիկ հրապարակում երեք անգամ նուագեց ազգային հիմնը։ Ժողովրդի ահագին խմբեր շրջապատեցին պալատը, առանձին շնորհակալութիւն յայտնելով նախկին գեներալ-նահանգապետ իշխան Սվեատոպոլկ-Միրսկուն։ Բաղաքային թատրոնում կայացաւ հանդիսաւոր ներկայացում, որ նուիրված էր Եկատերինա Կայսրուհու յիշատակին։ Ժողովրդական հիմնից յետոյ, որ երեք անգամ երգեց դրամատիկական ամբողջ խումբը, Կայսրուհու կիսարձանի վրա դրվեց դափնէ պսակ. վերջում նուագեցին Եկատերինայի հիմնը։

ՍՈՒԷՑ, 10 սեպտ. (Ռէյտէր)։ Այստեղ հասան «Պետերբուրգը» և «Սմօլենսկը»։

ՄԱԴՐԻԴ, 10 սեպտ. (Հավաս)։ Ծովային մինիստրը խօսակցութեան ժամանակ հաստատեց, որ ռուսական օժանդակ «Տերեկ» կրէյսէրին, որ խարիսխ է նետել Լասպալմասում, արգելված է 2000 տօնն ածուխ բառնալ։

Կ. ՊՕԼԻՍ, 10 սեպտ. (Վօլֆ)։ Էրզրումի նախկին նահանգապետ Բէուֆ-փաշան նշանակված է Սալօնիկի գեներալ-նահանգապետ։

ՀԱԱԳԱ, 10 սեպտ. (Ռէյտէր)։ Արտաքին գործերի մինիստրը պահանջում է 10,000 գուլդէն Պէկինի միսսիան պաշտպանելու համար։

11 սեպտեմբերի

ՎԻԼՆԱ, 10 սեպտեմբերի։ Բարձրագոյն հեռագիր ներքին գործերի մինիստրի անունով. «Սրտագին շնորհակալ եմ նոգեւորականութեան, վարչութիւնների եւ միւս դասակարգերի, քաղաքների եւ դպրոցական հաստատութիւնների ներկայացուցիչներից Ինձ արտայայտած զգացմունքների համար Կայսրուհի Եկատերինա Մեծի արձանի բացման առիթով։ Նիկոլայ»։ Այդ ամենաողորմած հեռագիրն ստացվեց իբր պատասխան ներքին գործերի մինիստրի հեռագրին. «Այսօր Նորին Կայսերական Բարձրութեան Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչի ներկայութեամբ տեղի ունեցաւ Կայսրուհի Եկատերինա Երկրորդի արձանի բացումը։ Հանդէսին ներկայ եղող հոգևորականների, վարչութիւնների, ազնուականութեան և միւս դասակարգերի ու դպրոցական հաստատութիւնների բազմաթիւ ներկայացուցիչները արկանում են առ ոտս Ձերդ Կայսերական Մեծութեան ամենահաւատարիմ հպատակութեան զգացմունքները։ Երջանիկ եմ այդ մասին ամենահպատակօրէն զեկուցանելու Ձերդ Մեծութեան»։

ԼԵԱՕԵԱՆ, 7 սեպտեմբերի։ (Ռէյտէր)։ Եղանակը շատ ցուրտ և անձրևային է։ Եապոնական զօրքերը վրաններ չունեն և նեղվում են վատ եղանակից։ Ռուսական զօրախմբերը հրակում են եապոնական բանակի երկու թևերի ճակատների վրա։ Ընդհարումները չեն դադարում։ Պաշտօնական տեղեկութեան համաձայն՝ եապոնական կորուստները օգոստոսի 12-ից մինչև 22-ի երեկոն հասնում են 21,000-ի։

ՍԷՈՒԼ, 9 սեպտեմբերի։ (Ռէյտէր)։ Եապոնական զօրքերը Գէնղանից հասան Թամխին։ Երեք կօրէացիներ, որ փորձել էին Սէուլի մօտ ՁՆասել երկաթուղուն, գնդակահար եղան եապօնացիներից։ Ցուզանից Սէուլ երկաթուղու կառուցումն այնքան արագ է առաջ գընում, որ յոյս ունեն բոլորովին վերջացնել նոյեմբերին։

ՍՈՒԷՑ, 10 սեպտեմբերի։ (Ռէյտէր)։ «Սմօլենսկը» և «Պետերբուրգը» մտան Ջրանցքը, ստանալով հրահանգ այստեղի ռուս կօնսուլից։

ԼԱՍՊԱԼՄԱՍ, 10 սեպտեմբերի։ (Ռէյտէր)։ Կէսօրին «Տերեկը» ծով դուրս եկաւ։ Անյայտ է թէ ուր է գնում։

ԿՕԲԷ, 10 սեպտեմբերի։ (Ռէյտէր)։ Եապոնացիները Դունգարեան նեղուցում բռնեցին անգլիական «Կրուզադէր» շոգենաւը, որ Պորտ-Արտուրի մօտի եապոնական բանակը թողեց իր մատդրութիւնն ամրութիւնների տակին ական փորելու վերաբերութեամբ՝ այդ բանի դժուարութեան պատճառով։ Եապոնացիներն սկսեցին այրել սպանվածներին։ Մի քանի ժամանակ այդ բանն անհնար էր բերդի կրակի պատճառով։ Դիակները հաւաքում են մեծամեծ կոյտերով և վրան այրվող իւղեր են ածում։ Բոլոր դիակների այրելն անպայման անհրաժեշտ է դառնում, որպէս զի ժանտախտի երևալու առաջն առնվի։ Օդն այնքան ուրականներ։ Հասնելով արձանի մօտ, արքեպիսկոպոսը կատարեց պէտք եղած ծէսը և մի կարճ քարոզ ասաց։ Արձանի վրա բազմաթիւ պսակներ դրվեցին։ Երեկոյեան կամաւոր հրդեհաշէջների նուագախումբը պալատի առջևի փոքրիկ հրապարակում երեք անգամ նուագեց ազգային հիմնը։ Ժողովրդի ահագին խմբեր շրջապատեցին պալատը, առանձին շնորհակալութիւն յայտնելով նախկին գեներալ-նահանգապետ իշխան Սվեատոպոլկ-Միրսկուն։ Բաղաքային թատրոնում կայացաւ հանդիսաւոր ներկայացում, որ նուիրված էր Եկատերինա Կայսրուհու յիշատակին։ Ժողովրդական հիմնից յետոյ, որ երեք անգամ երգեց դրամատիկական ամբողջ խումբը, Կայսրուհու կիսարձանի վրա դրվեց դափնէ պսակ. վերջում նուագեցին Եկատերինայի հիմնը։

ՍՈՒԷՑ, 10 սեպտ. (Ռէյտէր)։ Այստեղ հասան «Պետերբուրգը» և «Սմօլենսկը»։

ՄԱԴՐԻԴ, 10 սեպտ. (Հավաս)։ Ծովային մինիստրը խօսակցութեան ժամանակ հաստատեց, որ ռուսական օժանդակ «Տերեկ» կրէյսէրին, որ խարիսխ է նետել Լասպալմասում, արգելված է 2000 տօնն ածուխ բառնալ։

Կ. ՊՕԼԻՍ, 10 սեպտ. (Վօլֆ)։ Էրզրումի նախկին նահանգապետ Բէուֆ-փաշան նշանակված է Սալօնիկի գեներալ-նահանգապետ։

ՀԱԱԳԱ, 10 սեպտ. (Ռէյտէր)։ Արտաքին գործերի մինիստրը պահանջում է 10,000 գուլդէն Պէկինի միսսիան պաշտպանելու համար։

11 սեպտեմբերի

ՎԻԼՆԱ, 10 սեպտեմբերի։ Բարձրագոյն հեռագիր ներքին գործերի մինիստրի անունով. «Սրտագին շնորհակալ եմ նոգեւորականութեան, վարչութիւնների եւ միւս դասակարգերի, քաղաքների եւ դպրոցական հաստատութիւնների ներկայացուցիչներից Ինձ արտայայտած զգացմունքների համար Կայսրուհի Եկատերինա Մեծի արձանի բացման առիթով։ Նիկոլայ»։ Այդ ամենաողորմած հեռագիրն ստացվեց իբր պատասխան ներքին գործերի մինիստրի հետևեալ հեռագրին. «Այսօր Նորին Կայսերական Բարձրութեան Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչի ներկայութեամբ տեղի ունեցաւ Կայսրուհի Եկատերինա Երկրորդի արձանի բացումը։ Հանդէսին ներկայ եղող հոգևորականների, վարչութիւնների, ազնուականութեան և միւս դասակարգերի ու դպրոցական հաստատութիւնների բազմաթիւ ներկայացուցիչները արկանում են առ ոտս Ձերդ Կայսերական Մեծութեան ամենահաւատարիմ հպատակութեան զգացմունքները։ Երջանիկ եմ այդ մասին ամենահպատակօրէն զեկուցանելու Ձերդ Մեծութեան»։

ԼԵԱՕԵԱՆ, 7 սեպտեմբերի։ (Ռէյտէր)։ Եղանակը շատ ցուրտ և անձրևային է։ Եապօնական զօրքերը վրաններ չունեն և նեղվում են վատ եղանակից։ Ռուսական զօրախմբերը հրակում են եապօնական բանակի երկու թևերի ճակատների վրա։ Ընդհարումները չեն դադարում։ Պաշտօնական տեղեկութեան համաձայն՝ եապօնական կորուստները օգոստոսի 12-ից մինչև 22-ի երեկոն հասնում են 21,000-ի։

ՍԷՈՒԼ, 9 սեպտեմբերի։ (Ռէյտէր)։ Եապօնական զօրքերը Գէնղանից հասան Թամխին։ Երեք կօրէացիներ, որ փորձել էին Սէուլի մօտ ՁՆասել երկաթուղուն, գնդակահար եղան եապօնացիներից։ Ցուզանից Սէուլ երկաթուղու կառուցումն այնքան արագ է առաջ գընում, որ յոյս ունեն բոլորովին վերջացնել նոյեմբերին։

ՍՈՒԷՑ, 10 սեպտեմբերի։ (Ռէյտէր)։ «Սմօլենսկը» և «Պետերբուրգը» մտան Ջրանցքը, ստանալով հրահանգ այստեղի ռուս կօնսուլից։

ԼԱՍՊԱԼՄԱՍ, 10 սեպտեմբերի։ (Ռէյտէր)։ Կէսօրին «Տերեկը» ծով դուրս եկաւ։ Անյայտ է թէ ուր է գնում։

ԿՕԲԷ, 10 սեպտեմբերի։ (Ռէյտէր)։ Եապօնացիները Դունգարեան նեղուցում բռնեցին անգլիական «Կրուզադէր» շոգենաւը, որ Պորտ-Արտուրի մօտի եապոնական բանակը թողեց իր մատդրութիւնն ամրութիւնների տակին ական փորելու վերաբերութեամբ՝ այդ բանի դժուարութեան պատճառով։ Եապօնացիներն սկսեցին այրել սպանվածներին։ Մի քանի ժամանակ այդ բանն անհնար էր բերդի կրակի պատճառով։ Դիակները հաւաքում են մեծամեծ կոյտերով և վրան այրվող իւղեր են ածում։ Բոլոր դիակների այրելն անպայման անհրաժեշտ է դառնում, որպէս զի ժանտախտի երևալու առաջն առնվի։ Օդն այնքան ու-

ժեղ կերպով է վարակված դիակների հոտից, որ նոյն իսկ Դարնին նեղվում էր։

ԼՕՆԴՕՆ։ (Ռէյտէր)։ «Թայմս» հրատարակեց Օկուի զեկուցումը ձախ զօրաբաժնի գործողութիւնների մասին Լեաօեանի մօտ օգոստոսի 17-ից մինչև 22-ը։ Օկուն յիշում է ռուսական ամրութիւնների ներկայացրած արգելքների երկրորդական պաշտպանողական արգելքների ամբողջ սիստեմով և խօսում է ռուսական արտիլէրիայի կատաղի կրակի մասին։ Այդ պատճառով ի դերև անցան եապոնացիների բազմաթիւ յարձակումները, որոնք իւրաքանչիւր անգամ ընկնում էին այդ սպանիչ կրակի տակ։ Զեկուցման մէջ մատնացոյց է արված յամառ դիմադրութիւնը, որ ռուսները ցոյց տուեցին բոլոր կէտերի վրա։

ՄՕՍԿՎԱ, 11 սեպտեմբերի։ Կայսաւ. դըպրոցների դիրեկտորների խորհրդակցութիւնը զառաջիկայ մանկավարժների համար հանրակացարան հիմնելու մասին։—Քաղաքային հոգաբարձութիւնները կընդունեն իրանց հիմնարկութիւններում Հեռաւոր Արևելքում սպանվածների և վիրաւորվածների որդիներին։

ՏՕԿԻՕ, 11 սեպտեմբերի։ (Ռէյտէր)։ Գեներալ Նիկոլսոն, անգլիական գլխաւոր զինուորական գործակալը եապոնական զօրքի մօտ, վերադարձաւ Տօկիօ։ Նա հիացած է ռուսաց զինուորական ինժենէրների հմտութեան վրա։

ԲԱԳՈՒ։ Ժամանեց Բուխարայի էմիրը։ Կոմս Շուվալօր ուղևորվեց Աստրախան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-ադիւտանտ Կուրոպատկինի ամենահպատակ հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան Անունով 1904 թ-ի սեպտեմբերի 10-ից. «Սեպտեմբերի 10-ի ընթացքում զեկուցումներ չեն ստացվել պատերազմական գործողութիւնների մասին։ Ամբողջ ճակատի վրա հակառակորդը ակտիվ գործողութիւններ չը սկսեց։ Վերոյիշեալի մասին ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձեր Կայսերական Մեծութեանը։»

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այսօր ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՕՆԻ հայկական բաժնի հիմնված օրից սկսած ներկայացումներին մասնակցող անձանց յարգոյաբար խնդրում եմ, կիրակի, սեպտեմբերի 12-ին առաւօտեան ժամը ճիշդ 11-ին ժողովվել Թատրօնի դահլիճում, նոյն բաժնի համար նոր անդամներ ընտրելու։ Ժողովը համարվելու է վերջնական։
3—3 ո. շ. կ. Խաչատուր Տէր-Մարգարեանց

Թիֆլիսի Ժողովարան

Սեպտեմբերի 7-ից ամեն երեքշաբթի և շաբաթ օրերը ամարային շէնքում նշանակված են ընտանեկան երեկոյթներ, մասնակցութեամբ զինուորական երաժիշտների և սաղանդարների։
7, 11, 14. 3—3

Բ Ժ Ի Շ Կ
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆԸ

տեղափոխվել է Եւանդուլեան փողոց, № 12, Արքունական Թատրօնից ոչ հեռու։
Ընդունելութիւնը հիւանդների
Առաւօտեան՝ 11—1 ժամ.
Երեկոյեան՝ 5—6 ժամ.
(հ. կ.) 2—5

!! ՊԱՀԱՆՋԵՑԷՔ !!
ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ
ԵՂԲ. Գ. ԵՒ Մ. ՓՐԻԴՈՆԵԱՆՑՆԵՐԻ
ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ԲՈՒԾԱՐԱՆԻ

Պատկերազարդ կատալոգը հայերէն լեզուով բուծարանը գտնվում է Անդրկովկասի երկաթուղու Սկրա կայարանի մօտ։ Կատալոգը ուղարկվում է ԶՐԻԱԲԱՐ։
Դիմել՝ Тифлисъ, М. Е. Придонову Сергіевская ул. (հ. կ.) 9—12

ՖՐԱՆՍԵՐԷՆ

լեզուի մի փորձված ուսուցիչ պատրաստ և պարապվելու ցանկացողների հետ։ Ուշք է դարձվում մասնաւորաբար պրակտիկայի վրա։
Դիմել «Մշակի» խմբագրութեան։
(կ. ե. հ.) 6—10

Ոատիկ հայուհիների ժողովածուի պահեստը Екатеринодар. Куб. обл. книжн. маг. Галладжіанцъ.
1—4 շ. չ. Ն. Սաթունեան

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ

ՀԱՒԼԱԲԱՐՈՒՄ—ԱՐԱՔՍԵԱՆԻ ԹԱՏՐՕՆՈՒՄ
Կիրակի, սեպտեմբերի 12-ին
Հայ և վրաց թատերասէրների խումբը, բարեհաճ մասնակցութեամբ պ. Սողոմոնեանի
Կը ներկայացնէ հայերէն լեզուով
ԹՈՒՂԹ ԽԱՂԱՑՈՂԻ ԿԵԱՆՔԸ

Դրամա 5 գործ. թարգմ. ֆրանս. Պատկանեանի։
Ժօրժի դերը կը կատարէ պ. Սողոմոնեան։
Մասնակցում են.—Օր.օր. Աստղիկ, Բուչուկուրի, Հայկուհի, Սիրանոյշ, պ.պ. Գուլազեան, Լաշքարեան, Լեոն, Ղազարոսեան, Ղուշչեան, Ճէպէյեան, Զալարեան, Պետրոսեան, Սանթուրճեան, Սաֆարեան, Վարդանեան, Սողոմոնեան և ուրիշները։
Սկիզբն է 8½ ժամին երեկոյեան։
Խաղամիջոցներին կը նուագէ երաժշտական սիրողների խումբը։
Տեղերի գինը 10-ից մինչև 50 կոպէկ։
Վարչութիւն Արաքսեանի
1—1 Կարգադրիչ Պ. Նասիձէ

Բագուայ բաժանմունքում «Պարապետի վրա»
ԵՂԲԱՅՐՔ
ՄԷԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՑՆԵՐԻ

խանութում ստացվում է շարունակ մեծ քանակութեամբ ձմեռվայ տաք ֆուֆայկաներ, չուլիներ, նասկիներ, երեխայի հագուստներ. նոյնպէս ստացվում է գլխի արքեղումի աղլուխներ, չիլաներ, չիլի հաշիաներ և զանազան տեսակ գալանտերէյնի ապրանքներ։ Դրսի պատուէրները կատարվում են անմիջապէս։
(Կ. Չ.) 1—50

Վարձով են տրվում չորս մեծ և լոյս սենեակներ ներքին յարկում, իսկ վեց նոյնպէս մեծ և լոյս սենեակներ վերին յարկում, Ելիզաւետինսկայա փողոցի վրա, № 10, շատ մօտ Վօրոնցովի արձանին։
1—1

Ալէքսանդրոպոլի ս. Աստուածածին աւագ եկեղեցու համար հարկաւոր է
ԵՐԳԵՑԻԿ ԽՈՒՄԲ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ

և զեկավարող—տարեկան ռոճիկով 500—600 բուբլի (համաձայն պայմանի)։ Ցանկացողները պէտք է դիմեն յանձնախմբի անդամ պ. Յակովբ Տէր-Պողոսեանին հետեւեալ հասցէով։
Александрополь, Акопу Осиповичу Теръ-Погосянцу, 1—1

ԶԱՔԱՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ
Կովկասեան գրավաճառանոցում վաճառվում են վրացերէնից թարգմ. հետեւեալ գրքոյկները.
1. Նինօշվիլի Է. «Հրաժան» (պատմուածք). 5 կ.
2. Խուսկիվաձէ Թ. «Գերեզմանատանը» (էսքիզ) . . . . . 3 կ.
3. Դուտու-Մէգրելի «Անմեղ զոհ» (պատկեր ժողովրդի կեանքից). . . 8 կ.
4. Ղազբէկի Ա. «Ֆաթի» (Զատկական պատմուածք) . . . . . 5 կ.
Գումարով գնողներին 25% զեղչ, ճանապարհածախսը գնողների վրա։
Շուտով լոյս կը տեսնի Աւ. Ահարոնեանի «Լեռներում» — պատկեր վրացերէն լեզուով գինն է 5 կոպէկ։ (Կ. հ.) 1—2

ԿԱՊՍԻԼՆԵՐ ՄԱՏԻԿՕԻ
(Capsules au Matico)
ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ. ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԻ
Թոյլ է տրված Ռուսաստանում։

Աջողութեամբ գործ է ածվում հոնորէի բժշկութեան ժամանակ, երբէք չը յոգնեցնելով ստամոքսը, ինչպէս այդ լինում է, երբ գործ է ածվում Կապայբալզամը հեղուկ ձևով։

Парижъ, 8, Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։
(12 և 19) 13—20

Ջպալերի Զոգեշարժ Գործարան
Ա. Գ. ՄԱՆԿԻԿԵԱՆԻ
Օդեսայում
Գործարանի պահեստ զեկավարութեամբ և մասնակցութեամբ
Կ. Յ. ԱՒԱԳԵԱՆՑԻ
Թիֆլիսում, Պուշկինեան փողոց տուն Մանթաշևի № 12, հեռախօս № 568.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ՀԱՅ ԹԱՏԵՐԱՍԷՐՆԵՐԸ սեպտեմբերի 12-ին, կիրակի, առաւօտեան ժամը 11-ին, հրաւիրվում են ընդհանուր ժողովի ժողովարանի ամարային բնակարանում, խորհրդակցելու առաջիկայ սեզոնին տրվելիք ներկայացումների մասին։
Խնդրվում է ներկայ լինել թէ բոլոր հին սիրողներին և թէ նրանց, որոնք կը կամենային ներկայ սեզոնին մասնակցութիւն ունենալ։ (Չ. ո. կ.) 2—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆՑ
Ընդունում է հիւանդներ (բժշկութիւն, պլօմբ և արհեստական ատամներ շինել)։
Առաւօտեան 9—2
Երեկոյեան 4—7
Վանքի Մեծ փող. տուն Մարտիրոսեանի։
(Կ. Չ.) 4—100

Բ Ժ Ի Շ Կ
Կ. Եղիազարեանց
Ընդունում է ջղային և ներքին հիւանդութիւններով ամենայն օր առաւօտեան ժամի 12—1, երեկոյեան 5—6։ Էլէքտրաբուժութեան նորագոյն մեքենաներով։ Վեղեամինսկի № 4.
(3, 5, 9, 12, 14, 16, 19) 4—7

Յովսէփ Մէլիք-Զհաւեանի
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆՈՒՄ
ընդունում են գիշերօթիկ և երթևեկ աշակերտներ պատրաստվելու բոլոր միջնակարգ դպրոցների համար. ընդունվում են նաև իբրև գիշերօթիկ դպրոցներում արդէն սովորողները։ Օտար լեզուներից աւանդվում են գերմաներէն և ֆրանսերէն։ Թիֆլիս, Բէյհբութեան փողոց № 10, տ. պօլկ. Ստեփանեանի։
(Ե. հ. կ.) 8—10

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԳԾՆ ԿՈՒՐՍԵՐ
Երկու սեռի անձանց համար
(Баку, Пречетная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ուսկսիրներին մասնագիտական, եւ առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։ Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղագիր). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։ Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։
Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа)—տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. 19—30

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ տակ գտնվող
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4½ ամսում։
Պարապմունքի առարկաներն են.

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական, բանկային, յանձնարարական, գործարանական, նաև նաւթարդիւնաբերական և նաւթագործական հաշուապահութիւն։ 2) Առևտրական թուաբանութիւն։ 3) Առևտրական թղթակցութիւն։ 4) Մուրհակային և առևտրական օրէնքներ։ 5) Վայելչագրութիւն և ուղղումն ամենավատ ձեռագրի։ 6) Թուաբանութիւն համրիչի վրա։ 7) Գրելու վարժութիւն «Ռէմինկտոնի» գրելու մեքենայի վրա (կամաւոր)։

Կուրսերի համար դասատուներ են հրաւիրված համալսարանական կրթութիւնով և իրանց գործին մասնագէտ մարդիկ, որոնք հաստատվել են իրանց պաշտօնում ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. գեղագրութեան համար ևս հրաւիրված է մի գեղագիր նկարիչ։

Ընդունելութիւն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան։ Պարապմունքները սկսվում են 1904 թ-ի սեպտեմբերի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս ամենայն ճաշից յետոյ՝ 60 բուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստատներ։

Դրանից անկախ, 1904 թ-ի սեպտեմբերի 1-ից կը բացվեն քիչ պատրաստութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիսում, Н. В. Абраамяну, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։

Վերևում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։ (Ե. հ. կ.) 22—25

ԷՔԵՒՏՐԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՅԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
(Тифлисъ, Сололаки, Лермонтовская ул., № 9)

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն. 2) Առևտրական թուաբանութիւն. 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թուաբանութիւն համրիչի վրա. 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ձրի ուսուցումն ցանկացողներին գրող մեքենայի վրա։ Պարապմունքները կուրսերում լինում են ամեն օր։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը № 9, Սերգիևսկայա և Լերմօնտովսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (Կ. Չ.) 23—25

Дозволено цензурою. Тифлисъ, 11-го сентября 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 15.